

Ուսումնական մոդուլ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար

Սահմանափակ հնարավորություններով ընտրողների հետ խոսելու եթիկետի և վարքի նորմերի պահպանման մասին

Բոլոր տեսակի սահմանափակ հնարավորություններով ընտրողների հետ շփվելու համար նախատեսվելիք խորհուրդներ

- Օգնեցե՛ք, բայց երբեք մի՛ արտահայտեք ավստասանք:
- Դիմե՛ք անմիջապես ընտրողին, և ոչ թե՛ նրան ուղեկցող անձին:
- Պատրաստ եղե՛ք հանգամանորեն բացատրելու քվեարկության ընթացակարգը:
- Քվեարկության գործընթացում ընտրողի անկախության սկզբունքի ապահովման նպատակով, սեփական նախաձեռնությամբ մի՛ որոշեք ընտրողին օժանդակության ցուցաբերման անհրաժեշտությունը և գործե՛ք ընտրողի խնդրանքին համապատասխան:
- Ոչինչ չկեն՛ք քվեաթերթիկի վրա, նույնիսկ այն դեպքում, եթե ընտրողը խնդրում է օգնություն ցուցաբերել՝ ընտրությունը նշելու հարցում:
- Անպայման հարցրե՛ք, թե ում օգնությունն է նախընտրում: Սակայն, հաշվի՛ առեք՝ եթե ընտրողը չի կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, նա իրավունք ունի քվեարկության խցիկ հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ.
 - ☑ ընտրական հանձնաժողովի անդամի,
 - ☑ թեկնածուի,
 - ☑ ընտրական սուբյեկտի ներկայացուցչի,
 - ☑ դիտորդի,
 - ☑ մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների:

Կույր և վատ տեսողությամբ ընտրողների հետ շփվելու համար նախատեսվելիք խորհուրդներ

- Եթե կույր ընտրողը, ընտրատեղամասում տեղաշարժվելիս, օգնության կարիք ունի, կանգնե՛ք նրա կողքին, ձե՛րք մեկնեք նրան, այնպես, որ մի թեթև դիպչեք նրա դաստակին:
- Խոսե՛ք հստակ և դանդաղ:
- Ընտրողների գրանցում իրականացնողը կույր ընտրողին քվեաթերթիկները պետք է հանձնի հատուկ շրջանակի մեջ տեղադրված վիճակում (հատուկ ձևի մեջ առկա յուրաքանչյուր շրջանաձև կտրվածք պետք է համընկնի քվեաթերթիկում առկա ընտրական սուբյեկտի հերթական համարին):
- Կույր ընտրողների իրազեկման նպատակով, ընտրական քվեաթերթիկում առկա ընտրական սուբյեկտների հաջորդականության մասին տեղեկատվությունը կարող է մատուցել միայն մեկ այլ ընտրող:
- Եթե ընտրողը վատ տեսողություն ունի, նրան առաջարկե՛ք խոշորացնող տեսապակի (լինզա):



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



Global Expertise. Local Solutions.
Sustainable Democracy.



ՇԵՆՅՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԹԻՆՕՐԳԱՆՈՒԹՅԱՆ



ՆԱՆԻՏԻՆԻ ՄԻՋՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՆԳՈՒՄԱՐԱԾԻՆ, ԲԵՐԼԻՆԻ
ՇԵՆՅՈՒ

Ֆիզիկական սահմանափակ հնարավորությամբ ընտրողի հետ շփվելու համար նախատեսվելիք խորհուրդներ

Ընտրողը, ով վերին վերջույթների բացակայության պատճառով ի վիճակի չէ ինքնուրույն իրականացնել քվեարկության ընթացակարգերը, քվեարկությանը մասնակցում է հետևյալ ընթացակարգերի նախատեսմամբ.

- չի անցնում նշմարման ստուգման և նշմարման ընթացակարգ,
- նրան քվեաթերթիկներ տրամադրելիս՝ ընտրողների գրանցում իրականացնողը ընտրողների միասնական ցուցակի «ընտրողի ստորագրություն» սյունակում անում է գրառում՝ «Ֆիզիկական վիճակ», և հաստատում սեփական ստորագրությամբ,
- տվյալ ընտրողի փոխարեն, նրա ներկայությամբ, քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ գետեղում և հետո քվեատուփի մեջ է գցում այն անձը, որին ընտրել է ինքը՝ ընտրողը, բացառությամբ.
 - ☑ ընտրական հանձնաժողովի անդամի,
 - ☑ թեկնածուի,
 - ☑ ընտրական սուբյեկտի ներկայացուցչի,
 - ☑ դիտորդի,
 - ☑ մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ներկայացուցիչների:

Ընտրողի հետ, որը սայլակից է օգտվում, հաշվի՛ առեք հետևյալը.

- մի՛ հենվեք ընտրողի սայլակին,
- եթե սայլակի մեջ նստած ընտրողի հետ զրույցը մեկ րոպեից ավել շարունակվի, նստե՛ք նրա դիմաց և այնպես խոսեք նրա հետ,
- ազատե՛ք մինչև քվեախցիկ տանող ճանապարհը:

Խուլ և վատ լսողությամբ ընտրողի հետ շփվելու համար նախատեսվելիք խորհուրդներ

- Եթե ընտրողը հասկացնում է, որ նա չի լսում և չի կարող խոսել, նրա հետ շփվե՛ք գրավոր եղանակով:
- Եթե ընտրողին ուղեկցում է ժեստերի լեզվով խոսող անձ, ընտրողի հետ խոսե՛ք նրա միջոցով:
- Եթե ընտրատեղամաս եկած անձը չի կարող խոսել (խուլ կամ/և վատ լսողությամբ) և չգիտի քվեարկության ընթացակարգը, նրան ցո՛ւյց տվեք ընտրական տեղամասում փակցված քվեարկության ընթացակարգը արտացոլող պաստառը:

ՏԵՐՄԻՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՉՊԵՏՔ Է ՕԳՏԱԳՈՐԾԵՆՔ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈ՛ՒՆ

Հաշմանդամ տերմինը – վերցված է անգլերեն լեզվից և բաղկացած է in և valid բառերից: Տվյալ բառերի միացման դեպքում ստանում ենք ոչ վավերական, ոչ հավաստի բառը: Արդյունքում ստանում ենք խտրական և անարգող տերմին:

Սահմանափակ կարողություններով տերմինը – կարողությունները և հնարավորությունները, որպես տարբեր նշանակությամբ բառեր, չի կարելի հիշատակել որպես միմյանց հոմանիշներ, հետևաբար չի կարելի կիրառել այս տերմինը: Տվյալ մարդիկ սահմանափակ կարողություններով չեն: Նրանք ունեն կարողություններ, սակայն չունեն հնարավորություն կիրառելու այդ կարողությունները:

ՃԻՇՏ Է

Սահմանափակ կարողություններով
անձ կամ/և հատուկ
կարիքներ ունեցող անձ

ՃԻՇՏ ՉԷ

Հաշմանդամ
Սահմանափակ կարողություններով